Արձանագրություն N 10
ՀՀ ՖՆ կարիքների համար ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-23/9 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան «21» նոյեմբեր 2023թ.
Ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ
Գ. Վարդանյան - ֆինանսների նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետ /հանձնաժողովի նախագահ/.
Հանձնաժողովի անդամներ
Ա. Այվազյան - ֆինանսների նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների փորձագետ.
Տ. Գալոյան - ֆինանսների նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության գլխավոր մասնագետ.
Վ. Բանդուրյան - ֆինանսների նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության ավագ մասնագետ.
Ա. Հովսեփյան - ֆինանսների նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության գլխավոր մասնագետ:
Գնումները համակարգող
Լ.Սահակյան՝ ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության գնումների բաժնի ավագ մասնագետ

1. <u>Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին</u>

Հաշվի առնելով, որ բացառությամբ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների մյուս մասնակիցների հայտերը մերժվում են՝ հանձնաժողովի կողմից գնահատվել են միայն առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների /1-ին չափաբաժնի մասով «ԲԻԹ01» ՍՊԸ-ի, 2-րդ չափաբաժնի մասով «ՎԱԼԼԵՔՍ ԱՅԹԻ» ՍՊԸ-ի, 3-րդ և 5-րդ չափաբաժինների մասով Ա/Ձ Արթուր Հարությունյան Սերյոժայի և 4-րդ չափաբաժնի մասով «Տոպազ 95» ՍՊԸ -ի/ ներկայացված հայտերը, համաձայն որի «ԲԻԹ01» ՍՊԸ-ի և Ա/Ձ Արթուր Հարությունյան Սերյոժայի կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին, բացառությամբ «ՎԱԼԼԵՔՍ ԱՅԹԻ» ՍՊԸ-ի, «Տոպազ 95» ՍՊԸ –ի կողմից ներկայացված փաստաթղթերի, որոնցում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- «ՎԱԼԼԵՔՍ ԱՅԹԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված լիազորագիրը հաստատված չէ էլ. թվային ստորագրությամբ;
- «ՎԱԼԼԵՔՍ ԱՅԹԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում նշված չէ սպասարկման կենտրոնի տվյալները, ինչպես նաև բացակայում են հետևյալ նախադասությունները.
- ապրանքները մատակարարելիս մատակարար ընկերությունը պարտավոր է ներկայացնել արտադրողի (MAF - Manufacturer's Authorization Form) կամ նրա կողմից Հայաստանի Հանրապետությունում լիազորված

կազմակերպության (DAF - Distributer's Authorization Form) անունից նամակ-լիազորագիր:

- Ապրանքները պետք է լինեն չօգտագործված: Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը իրականացնում է մատակարարը:
- «Տոպազ 95» ՍՊԸ -ի կողմից ներկայացված լիազորագիրը հաստատված չէ էլ. թվային ստորագրությամբ,
- «Տոպազ 95» ՍՊԸ -ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում նշված են այլ ապրանքանիշի ապրանքներ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

2. Հանձնաժողովի կայացրած որոշումները

Հանձանժողովը որոշեց՝

1. Կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը և ծանուցել «ՎԱԼԼԵՔՍ ԱՅԹԻ» ՍՊԸ-ի և «Տոպազ 95» ՍՊԸ-ին 1/մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:
2. Բացառությամբ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների/1-ին չափաբաժնի մասով «ԲԻԹ01» ՍՊԸ-ի, 2-րդ չափաբաժնի մասով «ՎԱԼԼԵՔՍ ԱՅԹԻ » ՍՊԸ-ի, 3-րդ և 5-րդ չափաբաժինների մասով Ա/Ձ Արթուր Հարությունյան Սերյոժայի և 4-րդ չափաբաժնի մասով «Տոպազ 95» ՍՊԸ -ի/ մյուս մասնակիցների կողմից ներկայացված հայտերը մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը</u>

ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-23/9 ծածկագրով ընթացակարգի գնահատման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել 2023 թվականի նոյեմբերի 24-ին ժամը 12:00-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի Նախագահ _____ **Գ. Վարդանյան**

Գնահատող հանձնաժողովի անդամներ՝

_____ **Ա. Այվազյան**

_____ **Տ. Գալոյան**

_____ **Ա. Հովսեփյան**

_____ **Վ. Բանդուրյան**

Գնումները համակարգող՝ _____ **Լ.Սահակյան**